ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 2

«Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար հատուկ պաշտպանվածություն պահանջող փաստաթղթերի տպագրական աշխատանքներ ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ՇՀԱՇՁԲ-15-4-17/05» ծածկագրով շրջանակային համաձայնագրի շրջանակում գնահատող հանձնաժողովի նիստի.

ք.Գավառ 28 ապրիլի 2017թ.

Սույն թվականի ապրիլի 28-ին ժամը 14.30-ին «Գավառի պետական համալսարան» հիմնադրամում՝ ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1 հասցեում, տեղի ունեցավ համալսարանի կարիքների համար հատուկ պաշտպանվածություն պահանջող փաստաթղթերի տպագրական աշխատանքներ ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ՇՀԱՇՁԲ-15-4-17/05» շրջանակային համաձայնագրի շրջանակում գնային առաջարկների բացման հանձնաժողովի նիստ:

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի նախագահ Ն. Ա. Կուտուզյանը, հաձնաժողովի անդամներ՝ Ս. Գ. Ամիրխանյանը, Թ. Ա. Ասոյան, Հ. Գ. Ղաջոյանը: Հանձնաժողովի քարտուղարը զեկուցեց գրանցամատյանի գրառումների մասին, ըստ որի հայտ պարունակող ծրար է ներկայացրել «Ոսկան Երևանցի» տպագրատուն ԱՀ ԲԲԸ (ք. Երևան, Նոր Նորքի 1-ին զանգված, Ս. Սաֆարյան փողոց 11/1ա) կազմակերպությունը:

Հայտեր պարունակող ծրարներ չեն ներկայացրել ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/4 շրջանակային համաձայնագիր կնքած և հրավերն ստացած թվով 26 կազմակերպություններ:

Հանձնաժողովը գնահատեց.

1) «Ոսկան Երևանցի» տպագրատուն ԱՀ ԲԲԸ-ի հայտ պարունակող ծրարը մասնակցի կողմից կազմվել ու ներկայացվել է սահմանված կարգով և պարունակում է հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող՝
   - շրջանակային համաձայանագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու դիմում,
   - հայտարարություն՝ շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին,
   - հայտարարություն՝ մասնագիտական փորձառության մասին,
   - հայտարարություն՝ տեխնիկական միջոցներ մասին,
   - հայտարարություն՝ ֆինանսական միջոցների մասին,
   - հայտարարություն՝ աշխատանքային ռեսուրսների մասին,
   - գնի առաջարկ:

   Ծրարում առկա էր մեկ բնօրինակ, երկու պատճեն, յուրաքանչյուրը՝ յոթ էջից:

Նախահաշվային գինը՝

Չափաբաժինը	Գնման առարկայի անվանումը	Նախահաշվային գինը
1	Պետական նմուշի դիպլոմի տպագրություն	1.200.000/մեկ միլիոն երկու հարյուր հազար դրամ/